

Իրենց սիրտը՝ հուր շրջմովիկ ու բաղձիկ,
 Իրենց ծիծաղն՝ արշալոյս մը քինջ գարնան:

Բ

Ուռենիներ՝, արտասուեցէ՛ք տրտմագին
 Գորովակաթ արցունքը ձեր արծաթէ.
 Քաղցր է ինծի զեղումն այդ ձեր թախծանքին՝
 Որ տրտմանոյշ կայլակներով կը կաթէ:

Տիւանդորրին համբուն՝ ժամերն են ոսկի,
 Ձեր սաղարթին գորշ ու տարփոտ շուքին տակ՝
 Ուր բուրմունքը կու գայ ծաղիկ ու հասկի
 Եւ կը հնչէ յուշքերուս ծափը խայտակ:

Ուր մերթ ձայնն ալ թմբկիկներուն հեռաւոր,
 Ու ծիծաղը բամբիռներուն արծաթի,
 Ու գնչուհի երգիչներու տարփաւոր
 Սիրերգներուն արծագանգն ալ կը ցաթի:

Ու երբ դարձեալ հովիտն համակ ընդգրկէ
 Անդաստանին վայրի Լուռը թեւաւոր,
 Ու երբ ծառուտքն ալ արբեցած խոնջենքէ
 Անշարժանայ իր խոկին մէջ մենաւոր:

Արագիլ մը կ'անցնի յանկարծ անվրդով,
 Տուցադրելով կարմիրն իրեն կտուցին
 Ու կը տաքնայ մէջն արեւին հուր ցանցին,
 Ու կը ցանէ հոս հոն կափկափն իր թոթով:

Գ

Ուռենիներ՝, շիթ շիթ արցունք ցողեցէք,
 Մինչ բուրմունքնիդ իմ հոգւոյս մէջ կ'ամպանայ,
 Եւ այս չքնաղ անդորրութեան յեց՝ թող հեք
 Երագանքըս պահիկ մը գէթ հեշտանայ,

Եւ երբ իջնէ լեռնէն հովիկն իրիկուան,
 Ու սրսըփայ թախծոտ օրհներգը սօսին.
 Երբոր ցայտքերն աւագանին մէջ հոսին
 Ու ձեր շուքին տակ թռչնիկներ թռուրդան.